Employment Development Department
State of California

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գործազրկության ապահովագրությունը (Unemployment Insurance, UI) գործատուի կողմից վճարվող ծրագիր է, որը տրամադրում է եկամտի ժամանակավոր մասնակի փոխհատուցում, երբ դուք գործազուրկ եք դառնում, կամ կրճատվում է Ձեր աշխատանքի ժամաքանակը, և համապատասխանում եք իրավունակության բոլոր պահանջներին:

Ես իրավունք ունե՞մ օգտվելու Գործազրկության ապահովագրությունից:

Դուք կարող եք հայց ներկայացնել UI նպաստների համար, եթե աշխատանք չունեք, կամ եթե աշխատանքի ժամաքանակը կրճատվել է: UI նպաստներ ստանալու իրավունք ունենալու համար պետք է գործազուրկ լինեք ոչ սեփական մեղքով և ֆիզիկապես ունակ լինեք աշխատելու, պատրաստ լինեք աշխատանք ընդունելու և փնտրեք աշխատանք: Իրավունակության պահանջների ամբողջական ցանկին ծանոթանալու համար այցելեք **www.edd.ca.gov/Unemployment/Eligibility.htm** կայքէջը:

Ե՞րբ պետք է ներկայացնեմ իմ հայցը:

Դուք պետք է Ձեր հայցը ներկայացնեք աշխատանքը կորցնելու և ժամաքանակները կրճատվելու առաջին շաբաթում: Ձեր հայցը կգրանցվի այն շաբաթվա կիրակի օրը, որում ներկայացվել է դիմումը:

Կարևոր է. Հայցի ներկայացման ուշացումը կարող է հանգեցնել նպաստների վճարումների հետաձգման:

Ինչպե՞ս կարող եմ հայց ներկայացնել գործազրկության ապահովագրության համար:

UI-ի համար հայց ներկայացնել կարող եք հետևյալ եղանակներից մեկով՝

- **Առցանց**
  UI Online℠-ը UI հայց ներկայացնելու ամենաարագ և ամենահարմար միջոցն է: Սկսելու համար այցելեք **www.edd.ca.gov/UI_Online** կայքէջը: Կարող եք UI Online-ով հայց ներկայացնել ստորև նշված ժամերի ընթացքում՝

Շաբաթվա օրերը	Հասանելիության ժամերը
Երկուշաբթի	4:00-ից մինչև 22:00
Երեքշաբթի - Ուրբաթ	2:00-ից մինչև 22:00
Շաբաթ	2:00-ից մինչև 20:00
Կիրակի	5:00-ից մինչև 20:30

- **Հեռախոս**
  Ներկայացուցիչները հասանելի են հետևյալ անվճար համարներով, երկուշաբթիից ուրբաթ, **ժամը 8:00-ից մինչև 12:00** (Խաղաղօվկիանոսյան ժամանակով), բացի պետական ոչ աշխատանքային օրերից:

Անգլերեն	**1-800-300-5616**	**Կանտոներեն**	**1-800-547-3506**	**Վիետնամերեն**	**1-800-547-2058**
Իսպաներեն	**1-800-326-8937**	**Մանդարին**	**1-866-303-0706**	**Հեռատիպ (TTY)**	**1-800-815-9387**

- **Ֆաքս կամ փոստ**
  Ներկայացրեք Ձեր UI հայցը՝ օգտվելով UI դիմումի թղթային տարբերակից՝ այցելելով **www.edd.ca.gov/unemployment/Filing_a_Claim.htm** կայքէջը: Ավելի արագ և անվտանգ մշակման համար, լրացված դիմումը ֆաքսով ուղարկեք ձևաթղթում նշված համարով: Ձեր դիմումը փոստով ուղարկելու դեպքում օգտագործեք ձևաթղթում նշված հասցեն և լրացուցիչ ժամանակ նախատեսեք մշակման համար:

Ի՞նչ տեղեկություններ են հարկավոր դիմելու համար:

Ձեր հայցի հնարավորինս շուտ գրանցումն ապահովելու համար անհրաժեշտ կլինի տրամադրել անձնական տեղեկություններ, ինչպիսիք են՝ աշխատելու ընթացքում Ձեր օգտագործած անունները, սոցիալական ապահովության քարտի համարը, փոստային և բնակության հասցեները, ինչպես նաև՝

- ☐ տեղեկություններ վերջին գործատուի մասին, ներառյալ ընկերության անվանումը, անմիջական ղեկավարի անունը, հասցեն (փոստային և փաստացի գտնվելու վայրի) և հեռախոսահամարը՝ անկախ այն բանից, թե որքան ժամանակ եք աշխատել այդ վերջին գործատուի համար.
- ☐ վերջին աշխատած օրը և պատճառը, թե ինչու այլևս չեք աշխատում.
- ☐ համախառն եկամուտները, որոնք վաստակել եք աշխատած վերջին շաբաթվա ընթացքում՝ սկսած կիրակի օրվանից և վերջացրած Ձեր վերջին աշխատանքային օրով.
- ☐ տեղեկություններ անցյալ 18 ամսվա ընթացքում ունեցած բոլոր նախկին գործատուների մասին, ներառյալ՝ անունը, հասցեն (փոստային և փաստացի գտնվելու վայրի), աշխատելու ժամանակաշրջանը, վաստակած համախառն աշխատավարձերը, շաբաթական աշխատած ժամերը, ժամավճարի դրույքաչափը և պատճառը, թե ինչու այլևս չեք աշխատում.
- ☐ *Notice to Federal Employees About Unemployment Insurance*, Standard Form 8 (Գործազրկության ապահովագրության մասին ծանուցագիր դաշնային ծառայողներին, Ստանդարտ ձև 8) (միայն նախկին դաշնային ծառայողներ)
- ☐ DD 214 Member 4 copy (DD214 Անդամի օրինակ 4) (միայն նախկին զինվորականներ)
- ☐ Ձեր քաղաքացիությունը և, եթե ԱՄՆ քաղաքացի չեք ու գրանցված եք Միացյալ Նահանգների Քաղաքացիության և ներգաղթի ծառայություններում (United States Citizenship and Immigration Services), տվյալներ Ձեր աշխատանքի թույլտվության փաստաթղթից, ինչպիսիք են՝ օտարերկրացու գրանցման համարը, քարտի համարը և ավարտի ժամկետը (եթե կիրառելի է):

Կա՞մ սպասման ժամանակաշրջան:

Բոլոր հայցերն ունեն մեկ շաբաթվա չվճարվող սպասման ժամանակաշրջան: Ձեր սպասման ժամանակաշրջանը չի կարող սկսվել, քանի դեռ հայցը չեք ներկայացրել: Սպասման ժամանակաշրջան ստանալու համար պետք է հաստատեք նպաստներ ստանալու իրավունակությունը և համապատասխանեք իրավունակության բոլոր մյուս պահանջներին, որոնք սահմանված են Ձեր սպասման ժամանակաշրջանի շաբաթվա համար:

Ո՞րն է հաջորդ քայլը:

Հայցը ներկայացնելուց հետո փոստով տեղեկատվություն կուղարկվի Ձեր հայցի UI ծրագրի մասին, և Դուք կստանաք առանձին նամակ, որը կպարունակի Ձեր առաջին *Continued Claim Form*, DE 4581 (Շարունակական հայցի ձև): Հաճախորդներից շատերը կստանան նաև *Notice of Requirement to Register for Work*, DE 8405 (Ծանուցագիր աշխատանքի համար գրանցվելու պահանջի մասին), որով նրանց խորհուրդ է տրվում գրանցվել CalJOBS℠-ում՝ Կալիֆոռնիա նահանգի աշխատանքի բորսայի առցանց համակարգում: Անպայման կարդացեք բոլոր հարցումներն ու պատասխանեք դրանց՝ վճարման հետաձգումներից խուսափելու համար:

Ինչպե՞ս հաստատեմ նպաստներ ստանալու իմ իրավունակությունը:

Նպաստների վճարումներ պահանջելու համար պետք է ամեն երկու շաբաթը մեկ իրավունակության մասին տեղեկատվություն տրամադրեք EDD-ին: Դա կոչվում է նպաստներ ստանալու իրավունակության հաստատում: Նպաստների համար իրավունակությունը հաստատելու ամենաարագ ձևը UI Online համակարգն է: Նաև կարող եք հաստատել հեռախոսով՝ օգտվելով EDD-ի Tele-Cert℠-ից **1-866-333-4606** համարով, կամ փոստով ուղարկելով Ձեր *Continued Claim form*, DE 4581 (Շարունակական հայցի ձև)՝ ձևաթղթի վրա նշելով նամակի ուղարկման ամսաթիվը: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք **www.edd.ca.gov/unemployment/Certifying_for_Benefits_Process.htm** կայքէջը:

Վճարման տվյալներ

Վճարման տվյալները թարմացվում են ամեն օր և հասանելի են օրը 24 ժամ, շաբաթը 7 օր՝ Ձեր UI Online հաշվի միջոցով կամ զանգահարելով UI ինքնասպասարկման **1-866-333-4606** համարով:

Հաճախակի տրվող հարցեր

- **Որքա՞ն է UI-ն վճարում:**
  - Շաբաթական նպաստի գումարները տատանվում են նվազագույն $40-ից մինչև առավելագույն $450՝ կախված Ձեր բազային ժամանակաշրջանի եռամսյակային եկամուտներից:

- **Ի՞նչ է UI Online℠-ը:**
  - UI Online-ը հայց ներկայացնելու, նպաստների համար իրավունակությունը հաստատելու և հայցի ու վճարման վերաբերյալ տեղեկություններ դիտելու արագ, ապահով և հարմար միջոց է: Ձեր հաշիվը մուտք գործելու կամ գրանցվելու համար այցելեք **www.edd.ca.gov/UI_Online**:

- **Ինչպե՞ս կարող եմ հարց տալ իմ հայցի մասին:**
  - Հարց տալու լավագույն միջոցը UI Online համակարգն է: Համակարգ մուտք գործելուց հետո ընտրեք **Contact Us (Դիմեք մեզ)**, ինչպես նաև կատեգորիան և թեման, այնուհետև ներկայացրեք Ձեր հարցը: Երբ EDD-ն պատասխանի, այդ մասին կծանուցվեք էլեկտրոնային փոստով: Նաև կարող եք հարց ներկայացնել **askedd.edd.ca.gov** կայքում «Հարցնել EDD-ին» հղման միջոցով կամ զանգահարելով այս ձևաթղթի դարձերեսին նշված հեռախոսահամարներից մեկով:

- **Ինչո՞ւ է հեռախոսային հարցազրույց նշանակվել ինձ:**
  - Եթե EDD-ին լրացուցիչ տեղեկություններ հարկավոր լինեն նպաստներ ստանալու Ձեր իրավունակության մասին, Ձեզ փոստով կհայտնեն հեռախոսային ընդունելության օրը, ժամը և նպատակը: Հարցազրույցի համար հասանելի չլինելը կարող է հանգեցնել նպաստների հետաձգման կամ մերժման:

Այլ ռեսուրսներ

EDD-ն նահանգային և տեղական գործակալությունների հետ միասին անվճար մատուցում է աշխատանքի վերատեղավորման մի շարք համապարփակ ծառայություններ: Այդ ծառայությունները, որոնք ամբողջ նահանգով մեկ տրամադրվում են America's Job Center of California℠ (AJCC) կազմակերպության միջոցով, օգտակար են աշխատանք փնտրողներին, երիտասարդներին, վետերաններին և հաշմանդամություն ունեցող անձանց: Այդպիսի ծառայություններ են՝

- Օգնություն աշխատանք որոնելու հարցում
- Աշխատաժողովներ
- Տեղեկատվություն վերապատրաստման ծրագրերի մասին
- Աշխատատեղերի ցուցակներ CalJOBS℠-ի միջոցով
- Տեղեկատվություն աշխատավարձերի և միտումների մասին
- Ուղղորդումներ դեպի այլ ծառայություններ և այլն
- Հեռախոսներից, ինտերնետից, տպիչներից, հեռապատճենման սարքերից և պատճենահանման սարքերից օգտվելու հնարավորություն

Մոտակա AJCC գրասենյակ գտնելու համար այցելեք **www.edd.ca.gov/Office_Locator** կամ զանգահարեք ԱՄՆ Աշխատանքի տեղավորման և վերապատրաստման վարչության (U.S. Department of Labor Employment and Training Administration) օգնության ծառայության **1-877-US 2 JOBS (1-877-872-5627)** համարով: Տեղեկատվությունը հասանելի է մի քանի լեզուներով: Հեռատիպը (TTY) հասանելի է 1-877-889-5627 համարով: